

ԲԻԲԼԻԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ՝ ԵՐԿԻՐԸ» ԸՍՏ ՍԵՊԱԳԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴԻՄԻՏՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Աստվածաշնչի երբայերեն բնագրում Ասորեստանի թագավոր Աինախե-
րիբի (705–681) հայրասպան որդիներին ապաստան տվող երկրի 'մասին
հետևյալ ավանդույթունն է պահպանվել. «Ելավ և գնաց Սանիերիբը
(Sanherib)՝ թագավորը Ասորեստանի, իսկ ապրում էր նա Նինվեում: Նա ա-
ղոթք էր կատարում Նիսրոքի՝ իր աստծու տաճարում, իսկ Ադրամմալաքը
(Adrammalak) և Շարածարը (Sarasar)՝ իր որդիները, սրով սպանեցին նրան
և փախան 'RRT երկիր: Եվ նրա փոխարեն թագավորեց Ասարխադոնը
(Asarhaddon)՝ նրա որդին»: Աստվածաշնչի հունարեն թարգմանիչները եր-
բայերեն բնագրի այս հատվածի 'RRT երկրանունը ընթերցել են Ararat (Ա-
րարատ): Հետազոտողներից է Շրագերը՝ և Ի. Մ. Դյակոնովը՝ այն կար-
ծիքն են հայտնել, որ Աստվածաշնչի 'RRT երկրանունը պետք է կարդալ
Urartu (Ուրարտու):

Թվում է, թե հարցը ստացել է իր լուծումը, քանի որ Սինախերիբի հայ-
րասպան որդիները ապաստան են գտել Արարատ կամ Ուրարտու երկրում:
Սակայն Բ. Բ. Պիոտրովսկին, Ի. Մ. Դյակոնովը, Ս. Երեմյանը թեև Աստվա-
ծաշնչի 'RRT տերմինը ընթերցել են Urartu, բայց միաժամանակ այն կար-
ծիքն են հայտնել, թե Սինախերիբի հայրասպան որդիներն իրականում ա-
պաստան են գտել ոչ թե Արարատ կամ Ուրարտու (^{KUR}Urartu) երկրում, այլ
Շուբրիա (^{KL.R}Subria) երկրում: «681 թ. Սինախերիբը սպանվում է պալատա-
կան հեղաշրջման ժամանակ, – դրում է Բ. Բ. Պիոտրովսկին, – իսկ Ասար-
խադոնի դա՛հ բարձրանալուց հետո թագավորին սպանողները փախչում
են Շուպրիա: Աստվածաշնչում, որը պահպանել է այդ տեղեկությունը,
ասվում է, որ Սինախերիբի որդիները, որոնք սպանել են իրենց հորը, փա-
խել են Ուրարտու»: Բ. Բ. Պիոտրովսկին Շուբրիայի, որպես Սինախերիբի

¹ Священные книги (Ветхаго завета, для употребления евреям), т. 1, Вена, 1877, II книга царей (IV книга царств), гл. XIX, с. 648, стк. 36-37 (срав. Исаия, гл. XXXVII, стк. 37-38).

² E. S c h r a d e r. Keilinschriften und Geschichtsforschung. Giesen, 1878, S. 30.

³ И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ). – «Вестник древней истории» (далее – ВДИ), М., 1951, № 2), № 62, прим. 6.

⁴ Б. Б. Пиотровский. Ванское царство (Урарту). М., 1959, с. 112, (срав. с. 127); он же. О происхождении армянского народа. Ереван, 1946, с. 20.

Հայրասպան որդիներին ապաստան տվող երկրի, կապակցութեամբ ուշադրութեամբ է հրավիրում խորենացուն հասած Հայկական ժողովրդական ավանդութիւններում հիշատակված Սիմ լեռան, Արծրունի և Գնունի դավաճանների վրա, որոնցում, ըստ այդ աղբյուրի տվյալների, ապաստան են գտել Սինախերիբի Հայրասպան որդիները: Բ. Բ. Պիոտրովսկու այս ակնարկներից հասկանալի է, որ նա Սիմ լեռը, Արծրունի և Գնունի գավառները փնտրում է Շուբրիայում:

Ի. Մ. Դյակոնովը ընդդժոժում է, որ Բ. Բ. Պիոտրովսկու առաջ քաշած տեսակետը բխում է Հայկական ժողովրդական ավանդութեան տվյալներից. Աստվածաշնչում (2-րդ գիրք թագավորների, 4-րդ գիրք թագավորութիւնների, պարբերութիւն 19-րդ, 36-37) ցույց է տրված, որ նրանք (Սինախերիբի որդիները) փախել են Ուրարտու, բայց Բ. Բ. Պիոտրովսկին Հայկական ավանդութեան վերլուծութեան հիման վրա, որը պահպանվել է Մովսես խորենացու մոտ, եկել է այն եզրակացութեան, որ նրանք փախել են Սասունի լեռները, այսինքն՝ Շուբրիա⁵: Ի. Մ. Դյակոնովը, զարգացնելով այդ տեսակետը, միաժամանակ առաջ է քաշում նոր կոմպլեքսը. «(Աստվածաշնչի - Դ. Ա.) 'RRT-ն կարգա «Ուրարտու»: Բայց դասելով N 67 (АВИИУ) տեքստից, կարելի է ասել, որ Ուրարտուի թագավոր Ռուսա II-ը Ասարխադոնի հետ բարեկամական հարաբերութեան մեջ է եղել, դրա համար էլ այդ հաղորդումը թվում է ոչ այնքան արժանահավատ: Կարող է պատահել Սինախերիբին սպանողները փախել են Շուբրիա, որը հեռավոր Պաղեստինի հեղինակը մտցրել է Ուրարտու ընդհանուր հասկացութեան տակ»⁶:

Ս. Երեմյանն իր հերթին գրում է. «Հայկական պատմական ավանդութիւնները նշում է, որ Քաղիթ (այժմ Բաթման-սու) գետի վերին հոսանքում ընկած Սանասունքը կամ Սասունը այն երկիրն է, ուր ապաստան են դտել ասորեստանյան թագավորին սպանողները... Պարտութիւն կրելով թագավոր դարձած Ասարխադոնից (680-669) մարդասպանները փախչում են Շուբրիա»⁷:

Ս. Երեմյանի ակնարկած Սասուն կամ Սանասունք գավառը հիշատակվել է Հայկական ժողովրդական «Սասնա ծռեր» էպոսում, ուր, ըստ այդ աղբյուրի տվյալների, ապաստան են գտել Սինախերիբի Հայրասպան որդիները: Ս. Երեմյանը, ինչպես հասկացվում է նրա ակնարկից, Սասուն կամ Սանասունք գավառը տեղադրում է Շուբրիայում, որտեղ էլ փնտրում է Սինախերիբի Հայրասպան որդիներին:

Հետազոտողներից Գ. Ա. Մելիքիչվիլին քննարկվող հարցի կապակցութեամբ գրում է. «Աստվածաշնչում, օրինակ՝ հիշատակում է Սինախերիբի (Սանխերիբ) այն որդիների փախուստի մասին Արարատ (այսինքն՝ Ուրարտու) երկիր, որոնք սպանել են իրենց հորը: Ինքը, Ի. Մ. Դյակոնովը, քիչ հավանական է համարում ենթադրել, թե նրանք ապաստանելու իսկա-

⁵ Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство..., с. 127; И. М. Д ь я к о - н о в. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 172, прим. 264.

⁶ АВИИУ, № 62, прим. 6 (сравн. № 67).

⁷ Ս. Երեմյան. Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և Հայկական պիտակների կազմավորումները (Հայ ժողովրդի պատմութիւն). Հ. 1. Երևան, 1971, էջ 427:

կան տեղ գտան Ուրարտուում, որն այդ ժամանակ բարեկամական հարաբերությունների մեջ էր գտնվում Ասորեստանի հետ: Ըստ նրա կարծիքի, այստեղ, հավանաբար, խոսքը Շուպրիա փախչելու մասին է (տես՝ АВИИУ, N 62, ПРИМ. 6): Պարզ է, որ այստեղ «Ուրարտու» տերմինը օգտագործվել է ընդհանուր իմաստով այն տարածքի համար, որը տարածված է եղել Ասորեստանից հյուսիս, մոտավորապես այն նշանակությամբ, ինչպես ասորեստանցիները օգտագործել են հնագույն ժամանակներում «Նաիրի» տերմինը»⁸:

Ակներև է, որ այս հետադոտողները իրենց կարծիքը առաջ մղելու համար վկայակոչում են հիմնականում երեք փաստ: Դրանցից մեկն այն է, թե իբր, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների, Աինախերիբի սպանության ժամանակ, երբ Ուրարտուում կառավարում էր Ռուսա II-ը (685–645), Ասորեստանի և Ուրարտուի հարաբերությունները կրել են բարեկամական բնույթ, որի պատճառով էլ Ասորեստանի թագավորին սպանողները ապաստան չէին կարող գտնել Ուրարտուում: Վկայակոչված երկրորդ փաստն այն է, թե իբր, ըստ Մովսես Խորենացուն հասած հայկական ժողովրդական ավանդության և հայկական ժողովրդական «Ասանա ծուեր» էպոսի տվյալների, Սինախերիբին սպանողները ապաստան են գտել Սիմ կոչվող լեռան, Արծրունի, Գնունի, Սասուն կամ Սանասունք գավառների շրջանում, որոնք իբր եղել են Շուբրիայի կազմում, այլ ոչ թե Ուրարտուի: Վկայակոչված երրորդ փաստն էլ այն է, թե Շուբրիան Աստվածաշնչում հանգես է եկել Ուրարտու ընդհանուր տերմինի տակ:

Այս կապակցությամբ քննարկենք եղած սեպագիր տեքստերի և ժողովրդական ավանդությունների ընձեռած փաստերը:

Բաբելոնական սեպագիր ժամանակագրությունները հետևյալ տեղեկությունն են պահպանել. «Տեբեթու ամսի 20-ին Սինախերիբին՝ Ասորեստանի թագավորին, խռովության ժամանակ սպանեց նրա որդին (arlu-su): Սինախերիբը 25 տարի թագավորեց Ասորեստանի վրա: Տեբեթու ամսի 20-ից մինչև ադդարու ամսի 2-ը Ասորեստանում տիրեց խռովություն: Սիմանու ամսի 18-ին նրա որդի Աշշուրախիդդինը (Ասարխադդոնը – Դ. Ս.) բարձրացավ ասսուրական գահին»⁹:

Եթե բաբելոնական սուլյն արձանագրության մեջ մատնանշվում է, թե Սինախերիբից դժգոհ էր նրա որդին, որը սպանում է իր հորը, ապա Ասարխադդոնը «պրիզմայի» սեպագիր արձանագրությունում հիշատակում է, որ նրանց թիվը մեկից ավելին էր. «Ստույգ փաստը իր թագաժառանգության մասին դարձավ հայտնի իր եղբայրներին (ahē^{mld}), և նրանք մոռացան աստվածների պատգամները ու անձնատուր լինելով իրենց դաժան մտադրություններին, մտադրելով չարիք, չար լեզու, ցանելով զրպարտություն, աստվածների կամքին հակառակ նրանք ապստամբեցին իմ դեմ և մեղագործ անհավատարմությամբ իմ մեջքի ետև նրանք մտադրեցին ապստամբություն իրար մեջ: Հասկանալով իմ հոր կամքը, հակառակ աստվածների մտադրության, նրանք փորձում էին լարել իմ դեմ նրան, ով եղել էր խոր

⁸ Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту. Тбилиси, 1954, с. 297.

⁹ E. S c h r a d e r. Keilinschriftliche Bibliothek (KB). Berlin, 1890, S. 280-282 (Babylonische Chronik "B", Lin. 34-38); АВИИУ, N 63.

սրտով իմ նկատմամբ: Այդ նպատակով նրա հետ նրանք վարվում էին լավ: Բայց նրա աչքերը հառած էին իմ վրա, որպեսզի պահպանեին իմ արքայական իշխանությունը»¹⁰: «Նրանք ապստամբեցին և թագավորությունը տիրանալու համար սպանեցին Սինախերիբին»¹¹: «Եղբայրներս (ahē¹²), – մի ուրիշ սեպագիր արձանագրության մեջ տեղեկացնում է Ասարխադդոնը, – երբ լսեցին իմ արչավանքի մոտենալու մասին, լքեցին իրենց հավաքած զինվորական ուժերը՝ փախան անհայտ տեղ»¹²: Ակներև է, որ այստեղ խոսքը վերաբերում է հայրասպան եղբայրներին, որոնց Ասարխադդոնը հալածում է: Սակայն թե ինչ անունով երկիր են փախել, Ասարխադդոնը չի մատնանշում, այլ ասում է՝ «անհայտ տեղ»: Սեպագիր ուրիշ տեքստերում էլ այդ երկրի անվան մասին տեղեկություններ չեն պահպանվել: Ուստի այդ երկրի անվան մասին հետագա հիշատակությունների (այդ թվում նաև Աստվածաշնչից վերևում մեջբերված հիշատակության) ակունքը բանավոր զրույցներն են և, բնականաբար, կրում են ավանդական բնույթ:

Սեպագիր տեքստերը վկայում են, որ Սինախերիբն ունեցել է հինգ որդի. ավագ որդին՝ Աշշուր-նիդին-շումը¹³, երկրորդը՝ Արադ-Նինլիլը¹⁴, երրորդը՝ Աշշուր-ախսե-իդինը (Ասարխադդոն), չորրորդը՝ Աշշուր-շում-ուշարշին¹⁵, հինգերորդը՝ Աշշուր-իլու-մուբալլիսուն¹⁶: Հինգ որդիներից Աշշուր-նադին-շումը՝ Սինախերիբի ավագ որդին և դահաժառանգը, սպանվել է դեռևս մ.թ.ա. 694 թ.¹⁷: Մնացած չորս որդիներից Սինախերիբն իր գահի ժառանգորդ է ճանաչել ոչ թե երկրորդ որդուն՝ Արադ-Նինլիլին, այլ երրորդին՝ Ասարխադդոնին: Բնական է ենթադրել, որ Սինախերիբի սպանությունը կարող էր կազմակերպել երկրորդ որդին՝ Արադ-Նինլիլը, որին Սինախերիբը արհամարհել էր ու զրկել արքայական գահի ժառանգորդի իրավունքից, բայց ըստ երևույթին նրան հաջողվել էր գրավել իր կողմը նաև իր մյուս եղբայրներին:

Գիտական դրականություն մեջ շատ է քննարկվել մի կողմից Աստվածաշնչում (ինչպես նաև Սորենացու Պատմությունում և «Սասնա ծռեր» է-

¹⁰ R. C. T h o m p s o n. The Prisms of Esarhaddon and of Ashurbanipal. London, 1931, p. 10, lin. 23-31; V. S c h e i l. Le Prisme d'Assaraddon. Paris, 1914, Lin. 23-31; A. T. O l m s t e a d. History of Assyria. New York-London, 1923, p. 338.

¹¹ A. T. O l m s t e a d. Նշվ. աշխ., էջ 338: Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն. Երևան, 1978, էջ 130:

¹² D. D. L u c k e n b i l l. Ancient Records of Assyria and Babylonia. Chicago, II, 1927, §§ 501-505.

¹³ C. B e z o l d. Inschriften Sanherib's (KB, II, s. 98-99, lin. 63); R. C. T h o m p s o n. The Prisms of Esarhaddon and of Ashurbanipal, col. III, lin. 63; Ն. Ա դ ո ն ց. Նշվ. աշխ., էջ 120, ծանոթ. 2:

¹⁴ C. H. W. J o h n s. Assyrian Deeds and Documents, I. Cambridge, 1898, p. 15, N 20; Ն. Ա դ ո ն ց. Նշվ. աշխ., էջ 129, ծանոթ. 2:

¹⁵ V. S c h e i l. Une brique de Sennacherib avec mention probable du nom du meurtrier de ce roi. – "Zeitschrift für Assyriologie und fernand te Gebiete" (ZA), XI. Leipzig, 1896, S. 425-427 (comp. ZA, XII, 1897, S. 62); N. A d o n t z. Histoire d'Arménie. Paris, 1946, p. 126, ann. 2.

¹⁶ V. S c h e i l. Pierre avec inscription de Sennacherib, mentionnant un nouveau fils de ce roi (Recueil de travaux relatifs a la philologie et à l'archéologie égyptiennes et assyriennes, XXVI, Paris, 1904, p. 27-28); Ն. Ա դ ո ն ց. Նշվ. աշխ., էջ 129, ծանոթ. 2:

¹⁷ Ն. Ա դ ո ն ց. Նշվ. աշխ., էջ 129:

պոսում), մյուս կողմից սեպագիր արձանագրություններում պահպանված տեղեկությունները Մինախերիբի որդիների անունների վերաբերյալ և զանազան փորձեր են արվել ընդունել կամ բացատրել դրանք¹⁸: Ինչևիցե, փաստն այն է, որ Ադրամմալաքի և Շարաժարի նախատիպերն են եղել Արադ-Նինիլը, Աշշուր-շում-ուշաբշին կամ գուցե նաև Աշշուր-իլու-մուբալ-լիսուն: Նկատի ունենալով, որ Աստվածաշնչից վերևում մեջբերված հիշատակությունում Մինախերիբի հայրասպան որդիների իրական անունների փոխարեն պահպանվել են բոլորովին այլ անուններ, մեկ անգամ ևս կարելի է ասել, որ իրոք Աստվածաշնչի այդ հիշատակությունը կրում է ավանդական բնույթ:

673 թ. Շուբրիայի վրա Ասարխադդոնի կատարած արշավանքի արդյունքները¹⁹, որոնց մասին տեղեկությունները պահպանվել են սեպագիր տեքստերում, ցույց են տալիս, որ Ասորեստանի թագավորը նվաճում է ամբողջ Շուբրիան, տապալում Շուբրիայում իշխող խուրրիական դինաստիան, սպանում երկրի թագավոր Նիկ-Թեշուբին, ինչպես նաև նրա որդիներ Շերպի-Թեշուբին և Լիգի-Թեշուբին, երկիրը բաժանում Ուպպումմու և Քուլլիմմերի ասուրական երկու փոխարքայությունների միջև և դրանց վրա որպես փոխարքաներ նշանակում իր երկու մերձավորներին՝ Մարդուբ-Էրիբային (այլ ընթերցում՝ Բիլու) և Բել-իդդինային: Ասարխադդոնին հաջողվում է նաև Շուբրիայից գերի վերցնել ասուրական բոլոր փախստականներին: Սակայն Շուբրիայում ապաստանած ասուրական փախստականների շարքում չեն հիշատակվում Մինախերիբի ալստամբ որդիները, համենայն դեպս, այդ մասին ոչինչ չի ակնարկում ինքը՝ Ասարխադդոնը, Շուբրիան նվաճելու հետ կապված իր ընդարձակ ռազմագրի մեջ, մի բան, որ սպասելի էր, եթե դեպքն իրոք տեղի ունեցած լիներ: Ուրեմն Շուբրիայում Մինախերիբի հայրասպան որդիներին որոնելը, որ ակնարկում են վերոհիշյալ հետազոտողները, չունի փաստական հիմք:

Ինչպես ընդգծում է է. Ֆորբերը²⁰, ըստ ասուրական արքայական հետախուզական սեպագիր նամակների տվյալների, մ.թ.ա. 714 թ. ասուրա-ուրարտական պատերազմից անմիջապես հետո Շուբրիան անկախացել էր Ուրարտուից: Ըստ Ասարխադդոնի «Նամակ Աշշուր աստծուն» սեպագիր ռազմագրի տվյալների, Ուրարտուից Շուբրիայի անկախ գիճակը շարունակվել է մինչև մ.թ.ա. 673 թ., երբ Շուբրիան նվաճվում է Ասարխադդոնի կողմից և մտցվում Ասորեստանի տիրապետության տակ: Ուստի, անտրամաբանական է, որ մ.թ.ա. 713 թ. մինչև մ.թ.ա. 673 թ. Ուրարտուից բոլորովին անկախ, իր քաղաքականությամբ նրան հակադրված Շուբրիա երկիրը (^{KUR}Subria) մ.թ.ա. 681 թ. Մինախերիբի սպանությունից հետո կապված իրադարձություններում Աստվածաշնչում կամ որևէ այլ աղբյուր ներկայաց-

¹⁸ H. W i n c k l e r. Sareşer und Assarhaddon (Archiv für Orientforschung (Afo), II, 1901, S. 53-59); Ն. Ա դ ո ն ց. Նշվ. աշխ., էջ 130: Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство..., с. 112, (срав. с. 127); о н ж е. О происхождении армянского народа, с. 20, АВИИУ, № 62, прим. 4.

¹⁹ Altorientalische Forschungen, II, 1901, S. 27-43; ZA, XI, 1896, S. 234-254-259, IAKA, S. 102-107, ARAB, II, §§ 593-612; АВИИУ, № 67.

²⁰ E. F o r b e r. Die Provinzeinteilung des assyrischen Reiche. Leipzig, 1920, S. 87.

ներ Ուրարտուի (^{ՆՆ}Urartu) ընդհանուր հասկացության տակ, որ ենթադրում է վերոհիշյալ հետազոտողներից Գ. Ա. Մելիքիչվիլին, նամանավանդ որ Աստվածաշնչի ավանդութունն էլ հեռու է նման միտք արտահայտելուց:

Ուշադրավ է նաև սեպագիր արձանագրությունների ընձեռած այն փաստը, որ, ինչպես իմացանք նախորդ շարադրանքից, Ուրարտուի և Ասորեստանի հարաբերություններն Ուրարտուի թագավոր Ռուսա II-ի (685-645) ժամանակաշրջանում կրում էին ոչ թե բարեկամական, ինչպես ենթադրում է վերոհիշյալ հետազոտություններից Ի. Մ. Դյակոնովը, այլ դիվանագիտական քողի տակ թաքնված թշնամական բնույթ²¹: Իսկ դա նշանակում է, որ բացառված չէր այն, որ այդ ժամանակ Ասորեստանի թագավորին սպանողները ապաստան գտնեին Ուրարտու երկրում, ինչպես դա ներկայացված է Աստվածաշնչում:

Քննարկվող հարցի կապակցությամբ ուշագրավ է նաև այն փաստը, որ Աստվածաշնչի լատիներեն թարգմանություն (Vulgatan) մեջ «Արարատ երկիրը» կամ «Ուրարտու երկիրը», ուր ապաստան են գտել Սինախերիբի հայրասպան որդիները, ընկալվել է որպես «Արմենիա երկիր», այսինքն՝ Արարատ երկիրը (հմտ. Ուրարտու երկիրը) և Արմենիա երկիրը նույնն են:

Մովսես Խորենացուն հասած հայկական ժողովրդական ավանդություններից մեկը հետևյալ տեղեկությունն է հաղորդում Սինախերիբի հայրասպան որդիներին ապաստան տվող երկրի մասին. «Նաբուգոդոնոսորի թագավորությունից ութսուն, քիչ ավելի կամ պակաս տարի առաջ այս Սենեքերիմը Ասորեստանի թագավորն է եղել, նա, որ Երուսաղեմը պաշարեց հրեաների Եզեկիա առաջնորդի ժամանակ: Նրա որդիները՝ Ադրամելեքը և Սանասարը, նրան սպանելով, փախան եկան մեզ մոտ: Սրանցից մեկին, այն է՝ Սանասարին, մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է նույն Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի արևմտյան-հարավում: Նրա սերունդն աճելով ու բազմանալով լցրեց Սիմ կոչված լեռը: Իսկ նրանցից ականավոր ու գլխավոր մարդիկ վերջերը գործերով հավատարմություն ցույց տալով մեր թագավորներին՝ արժանացան այդ կողմերի բղջիխության ստանալուն: Իսկ Արգամոզանը բնակեցվեց նույն կողմի արևելյան-հարավում: Պատմագիրն ասում է, թե սրանցից սերվեցին Արծրունիներն ու Գնունիները»²²:

Այսպիսով, ըստ Խորենացուն հասած ավանդության սվյալների, Սինախերիբի հայրասպան որդիներից Սանասարը (Աստվածաշնչում՝ Շարածար) բնակություն է հաստատել «մեր աշխարհի», այսինքն՝ Արմենիայի (հմտ. Արարատ, Ուրարտու) «հարավ-արևմուտքում», «Ասորեստանի սահմանների մոտ», Սիմ լեռան շուրջը, իսկ Ադրամելեքը (տարբերակ՝ Արգամոզան)՝ «մեր աշխարհի» «հարավ-արևելքում», հետագա Արծրունիների ու Գնունիների տոհմական հայրենիքում: Խորենացուն հասած ավանդությունում առաջին անգամ է հիշատակվում «մեր քաջ նախնի Սկայորդին», որը Սի-

²¹ Д. Н. Саркисян. Страна Шубриа. Ереван, 1989, с. 54-57.

²² Մ ո վ ս ե ս ի ն ո Ր Ե ն ա ց ի. Հայոց պատմություն. գիրք I (23), Երևան, 1961:

նախերիբի սպանությունից ժամանակ իշխանություն է ունեցել վերահիշյալ տարածքում:

Ըստ հայկական ժողովրդական «Սասնա ծռեր» էպոսի²³, Մինախերիբի հայրասպան որդիները՝ Սանասարը և Բաղդասարը, իրենց հորը սպանելուց հետո, ապաստան են գտել Սասունում, որտեղ գտնվել է վաղ հայկական Սանասունք գավառը²⁴:

Ն. Ադոնցը ընդգծում է, որ Սանասուն կամ Սասուն գավառը իր տարածքով տարբերվել է Շուբրիայից. «Շուբրիա պետությունը բաղկացած էր... գավառներից՝ Ուպպումե-Իլիջայի կաղա, Կուլիմերի Խարզանի կաղա...: Ուլլուբան կամ Խուլպի կաղան Շուբրիայի մասը չէր կազմում. նա մտնում էր Ուսուսուանի (Սանասունի կամ Սասունի կաղա) հետ միասին Ուրարտուի իշխանության տակ, ինչպես մեր օրերում այս երկու կաղաները՝ Խուլպի ու Սասունը, Մշո (Մուշի) սանջակի մեջ են մտնում, մինչդեռ Իլիջան... Դիարբեքիի սանջակի»²⁵: Ինչպես նշում է Ն. Ադոնցը, Սասունին համապատասխանել է սեպագիր արձանագրությունների Ուսուսուանի մարզը (^{UR}Ususuani), որը մտել է Ուրարտուի կազմի մեջ դեռևս Մենուայի (810–786)²⁶ օրոք և տարբերվել է Շուբրիա երկրից²⁷:

Խորենացու պատմության հաղորդած տեղեկություններից իմացանք նաև, որ Մինախերիբի մյուս որդին՝ Ադրամելեքը (Աստվածաշնչում՝ Ադրամմալաք) ապաստան է գտել «մեր աշխարհի... «արևելյան-հարավում», Արծրունիների ու Գնունիների տոհմական երկրներում:

Ս. Երեմյանը Արծրունիների ժառանգական հայրենիքի տեղադրության մասին գրում է. «Ադրակ Մեծ գավառ. – Վասպուրականի 17-րդ գավառը, 1665 կմ² տարածությամբ, գրավում է Մեծ Զավ դետի վերին հոսանքը, որը կոչվում էր Ադրակ գետ, այժմ Ադրակ-սու, գավառիս կենտրոնն էր Հագամակերտ ավանը (այժմ՝ Բաշ-կալե): Նրանից ոչ հեռու գտնվում էր Սուրբ Խաչ կամ Բարդուղիմեոսի վանքը: Ադրակ Մեծը Արծրունի տոհմի ժառանգական հայրենիքն էր»²⁸:

Ս. Բարխուդարյանը²⁹ նույնպես Արծրունի տոհմական երկիրը տեղադրում է Ադրակ գետի ակունքների շուրջը և նրա անունը համադրում Ուրարտուի թագավոր Մենուայի (810–786) Վանից արևելք գտնվող Շուշանց-Ադգայ բնակավայրի հետևյալ արձանագրության մեջ հիշատակված Արծունիուինի (Aršuniuini) տեղանվան հետ.

[^{UR}]Ar-šu-ni-u-i-ni-e [...]

²³ Սասնա ծռեր. Բ-Ո, Երևան, 1954, էջ 485-492:

²⁴ Ս. Տ. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 426-427:

²⁵ Ն. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 200-201:

²⁶ Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, № 28, стк. 7.

²⁷ Մեր կարծիքով, ավելի ճիշտ Սասունի հետ համեմատելի է Շաշունի (^{KUR}Šasnuini) մարզը, որը հիշատակվել է Ալզի (^{KUR}Alzi) (հմտ. վաղ հայկական Աղձն գավառը՝ Սասունի լեռնային գանգավածի արևելքում) մարզի հետ: Մենուայի ժամանակից մտել է Ուրարտուի կազմում և տարբերվել է Շուբրիա երկրից (УКН, №№ 372²⁹, 373²⁹):

²⁸ Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 33:

²⁹ С. Г. Бархударян. Урартское происхождение армянского народного рода Арпруни.— В кн.: "Исследования по истории культуры народов Востока". М., 1960, с. 37-38.

[^DHal-di-na-ni KA be-di-ni ul-gu- [se...
 [...]zi-ni-e-i ur-pu-li ^DHal-di-na- [ni KA...
 [¹Me]-nu-a-i ga-la-zi su-i-ni-ni hu-su mu[...
 [^DHa]I-di-n[i]-e ba-u-si-i-e ⁿriai-di-ni [...]³⁰

Ինչպես նշում է Գ. Ա. Մելիքիչվիլին³¹, արձանագրության ընդհանուր իմաստից հասկանալի է, որ այն կրում է կրոնական բնույթ, որի մեջ խոսք է գնում խալգյան գարպասին զոհ մատուցելու և ապա նրանից կյանք, առողջություն խնդրելու մասին: Իսկ դա նշանակում է, որ Արծունիուհիների բնակավայրը կապվում է բուն ուրարտական աշխարհի հետ թե՛ տարածքով (այն գտնվել է Ուրարտուի Տուշպա-Վան մայրաքաղաքի շուրջը) և թե՛ այնտեղ իշխող ուրարտական իսպառի աստծու պաշտամունքով:

Ա. Բարխուդարյանը մատնանշում է ուրարտական Արծունիուհիների բնակավայրի և հայկական Արծրունի ցեղի հետևյալ աղբյուրները. «Արծրունի նախարարական ցեղը առաջացել է Արծունիուհիների տոհմից, որը Ուրարտուի դարաշրջանում ապրում էր Վանից հարավ, որը հետագայում բնակվում էր Աղբակ գավառում... Հավանական է թվում, որ ուրարտական պետության վաղ շրջանում այն տարածքը, որը դաղեյրել էր Արծրունի ցեղը, գտնվել է թագավորության կենտրոնական մասում, Վանից մի քիչ արևելք, իսկ հետագայում, հնարավոր է Ուրարտուի անկման փուլում, Արծրունի ցեղը նահանջել է դեպի հարավ-արևելք և ամրացել է Աղբակ ծայրագավառում, որտեղ Արծրունի նախարարական ցեղը հանդես է եկել Հայաստանի պատմության հենց սկզբից»³²:

Ակներև է, որ իր գրաված տարածքով Արծրունի-Արծունիուհիների մարզը տարբերվել է Շուբրիայից: Արծրունի-Արծունիուհիների մարզը հանդես է եկել Ուրարտուի կազմում դեռևս Մենուայի (810–786) ժամանակից: Այդ մարզը Շուբրիայի կազմում երբեք չի եղել:

Այնուհետև, ինքնացուցանող հասած ավանդություններից հասկանալի է, որ Արծրունիների և Գնունիների տոհմական երկրները գտնվել են իրար կողքի («Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի... հարավ-արևելքում»): Ուստի, Աղբակ գետի ակունքների և Վանի արանքում Ուրարտուի գրաված տարածքի հարավ-արևելքում սլետք է փնտրել Գնունի տոհմական երկիրը:

Սարգոն II-ի (722/1–705) ժամանակաշրջանի ասուրական արքայական հետախուզական նամակներից մեկը³³, որն էլ, ըստ Ի. Մ. Դյակոնովի³⁴, գրվել է Սարգոն II-ի կողմից 714 թ. Ուրարտուի վրա կատարված արշավանքի անմիջապես նախօրյակին, Գնունի մարզի հետ կապված ուշագրավ տեղեկություն է պահպանել: Նամակում հիշատակված մարզերից Ուրարտուիցիների մարզը, ըստ Ի. Մ. Դյակոնովի³⁵, տեղադրվում է Ասորեստանի և

³⁰ УКН, № 97.

³¹ УКН, стк. 196.

³² С. Г. Бархударян. *Նշվ. աշխ.*, էջ 37–38:

³³ R. F. Heber. Assyrian and Babylonian letters (IABL), part V, 1900, p. 472, № 444, lin. 4-20; R. H. Pfeiffer. State Letters of Assyria, № 8, lin. 4-20; АВИИУ, № 50 (4).

³⁴ АВИИУ, № 50 (3, 4).

³⁵ АВИИУ, № 50 (26), прим. 2.

Ուրարտուի սահմանների միջև գտնվող լեռներում. ըստ կոնտեքստի, նրա գիմացն է գտնվել Կակկադանուի մարզը, որը տեղադրվում է Ուրարտուի հարավ-արևելքում. Ալզին համասլատասխանում է հայկական Աղձն գավառին (Վանա լճից հարավ-արևմուտք, Կոտոմ-Կուտոմեն ամրոցի շուրջը), Արմիրալիուն (^{KUR}Ar-mir-a-li-u) նույնն է, ինչ-որ Սալմանասար III-ի հիշատակած Արամալեն և Սարգոն II-ի հիշատակած Արմարիլին-Արմարիյալին, որը գտնվում է Տուրուլա-Տուրուլալա (Վան) մայրաքաղաքից արևելք: Ինչ վերաբերում է Կանիուն մարզին (^{KUR}Qaniun), ապա Ի. Մ. Դյակոնովը³⁶ նշում է, որ նրա տեղն անորոշ է:

Սակայն մի շարք փաստեր մատնանշում են Կանիուն մարզի տեղը: Նախ, տեքստում Կանիուն մարզը հիշատակվում է Ուրարտուի մարզից և Կակկադանուի մարզից անմիջապես հետո, այսինքն՝ Ուրարտուի և Ասորեստանի սահմանների միջև գտնվող լեռներում, Ուրարտուի հարավում: Այնուհետև, նույն տեքստում հիշատակվում է, որ Ուրարտուի թագավորը Տուրուլալայից գնացել է Կանիուն, իսկ նրա 5 մարզերի կառավարիչները գտնվել են Ուեսի քաղաքում: Հավանաբար, թագավորը Տուրուլալա-Տուրուլայից գնում է Կանիուն քաղաք (^{URU}Qaniun), որպեսզի հետամտի Ուեսիում գտնվող կառավարիչներին: Այս մասին տեղեկություն է տալիս Սարգոն II-ին ուղարկած Սինախերիբի նամակներից մեկի հետևյալ հատվածը. «Ուրարտան գրել է ինձ հետևյալը՝ ուրարտացին (Ուրարտուի թագավոր Ռուսա I-ը – Դ. Ս.), որը (...) հենց նոր եկավ (...), նրա զորքերը ջարդվեցին. Ուեսի քաղաքի (Ուեսի քաղաք – Դ. Ս.) մարզի կառավարիչը սպանված է»³⁷: Տուրուլալա-Տուրուլալա (Վան) մայրաքաղաքը գտնվել է Վանա լճի հարավարևելյան ափին, որի շուրջն էլ պետք է փնտրել Կանիուն մարզը, իհարկե, դեպի Ուեսի քաղաքը ձգվող տարածքում, որտեղ հավաքվել էին մարզերի կառավարիչները, և դեպի ուր շարժվում էր Ուրարտուի թագավորը: Հետևաբար, Կանիունը ընկած է եղել Տուրուլալա-Տուրուլայի (Վան) և Ուեսի-Ուեսիի միջև: Այնուհետև, քանի որ Ուեսիում (Ուեսի) հավաքվող ուրարտական մարզպետների և թագավորի ուժերի ջարդի մասին հիմնական տեղեկությունը տալիս է Արգինի-Մուծածիր երկրի թագավոր Ուրարտան, կարելի է եզրակացնել, որ ինչպես Ուեսին (Ուեսի), այնպես էլ Կանիունը գտնվել են Արգինի-Մուծածիր երկրի և Ուրարտուի միջև, հատկապես Արգինի-Մուծածիր երկրի արևմտյան սահմաններում, այն է՝ Վանա լճից հարավ-արևելք ձգվող տարածքում³⁸: Ավելի կոնկրետ, Կանիուն մարզը կարելի է փնտրել Վանից հարավ-արևելք տարածված Արծունիունի-Արծրունի մարզի կամ Մեծ Աղբակ գավառի շուրջը, որտեղ, ըստ Խորենացու հաղորդած տեղեկությունների, գտնվել է Գնունի մարզը, որը Արծրունի մարզի հետ միասին գտնվել է Սկայորդու իշխանության տակ: Այս տվյալներից, բնականաբար, կարելի է ենթադրել, որ Կանիուն և

³⁶ АВИИУ, № 50 (4), прим. 2.

³⁷ HABL, 1911, part 11, p. 1185 (10), № 1079, lin. 4-9; АВИИУ, № 50 (5).

³⁸ Ն. Ադոնցը Կանիուն մարզի տեղադրության առթիվ գրում է. «Կանիունը հիշեցնում է Քանան՝ Ջուդիի շրջանի բնակավայրերից մեկը, որը Սենեքերիբը հայտարարում է. թե նվաճել է Տիմուրիի (հայկական Տմորիք) և Աշուր-ուսուլայի Կիսլու (Գեֆշ) նահանգի հետ միասին» (Ն. Ա. դ. ո. ն. ց. նշվ. աշխ., էջ 212): Սակայն վերոհիշյալ սեպագիր նամակի փաստերը չեն խոսում Ն. Ադոնցի տեսակետի օգտին:

Գնունի մարզերը նույնն են³⁹: Ավելին, կարելի է համադրել նաև Կանիուն մարզի կառավարիչ Սաքուաթայի (*Sak/quata*) և Խորենացու Պատմությունում հիշատակված Գնունի կոչվող մարզի «նախնի» Սկայորդու անունները⁴⁰, քանի որ հիշյալ երկու անձնավորությունները կապվում են միմյանց հետ թե՛ ժամանակի և թե՛ կառավարած մարզի զբաղեցրած տարածքի տեսակետից (երկուսն էլ ապրել են մինչ մ.թ.ա. 681 թ., երկուսն էլ իշխել են ուրարտական պետության մեջ մտնող այն տարածքում, որը գտնվել է Վանի հարավ-արևելքում՝ Արծունիուհինի-Արծրունի մարզի կողքին)⁴¹:

Կանիուն մարզը իր զբաղված տարածքով տարբերվում է Շուբրիայից: Այն մ.թ.ա. 714 թ. ասսուրառուարտական սլատերագմից դեռևս առաջ հանդես է եկել Ուրարտուի կազմում և այդպես շարունակել է մնալ Ուրարտուի կազմում նաև այդ սլատերագմից հետո: Մինչդեռ Շուբրիան մ.թ.ա. 714 թ. պատերագմից հետո անջատվել է Ուրարտուից:

Ակներև է, որ ինչպես Միմ լեռը և այնտեղ տարածված Սասուն կամ Սանասունք գավառը, այնպես էլ Արծրունի և Գնունի գավառները հանդես են եկել Ուրարտուի կազմում, այլ ոչ թե Շուբրիայի, որ ենթադրել են վերոհիշյալ հետազոտողներից Բ. Պիտրովսկին և Ս. Երեմյանը:

Այսպիսով, ըստ սեպագիր արձանագրությունների և ժողովրդական ավանդությունների տվյալների, բիբլիական Արարատ երկիրը, որտեղ իրենց հորը սպանելուց հետո ապաստան են գտել Ասորեստանի թագավոր Սինախերիբի հայրասպան որդիները, համապատասխանում է ոչ թե Շուբրիա երկրին, ինչպես սխալմամբ ենթադրել են հետազոտողներ Բ. Բ. Պիտրովսկին, Ի. Մ. Գյակոնովը, Ս. Երեմյանը և Գ. Ա. Մելիքիշվիլին, այլ Ուրարտու (Արմենիա) երկրին:

БИБЛЕЙСКАЯ "СТРАНА АРАРАТ" ПО КЛИНОПИСНЫМ НАДПИСЯМ И НАРОДНЫМ ПРЕДАНИЯМ

ДИМИТРИЙ САРКИСЯН

Р е з ю м е

По данным клинописных надписей, Библейская "страна Арарат", где нашли прибежище отцеубийцы — сыновья царя Ассирии Синахерибе — после убийства своего отца, соответствует не стране Шубриа, как ошибочно предполагали исследователи Б. Б. Пиотровский, И. М. Дьконов, С. Т. Еремян и Г. А. Меликишвили, а стране Урарту или Армения.

³⁹ Q>G անցումը տե՛ս նաև՝ *Qulia* > Գուլի (ջան) (ՄՀԽ, № 134):

⁴⁰ Սկայորդի անունը կարող է լինել Սաքուաթա անվան ժողովրդական ստուգաբանական ձևը: Ավելի շուտ Սկայորդի անձնանունը ունի հայկական ծագում և կազմված է հայերենի հսկա (հաղթանդամ) և որդի (զավակ) արմատներից:

⁴¹ Սկայորդին մարզի կառավարիչ էր (Խորենացու մոտ՝ նախնի, այլ ոչ թե թագավոր), իսկ Սարդուն II-ի (722 թ.—705), Սինախերիբի (705—681) և Ասադիադդունի (680—669) ժամանակաշրջանում Ուրարտուի թագավորներն են եղել Ռուսիա I-ը (735—713), Արդիլթի II-ը (713—685) և Ռուսա II-ը (635—645):